



ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



**... Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել ժողովրդիդ ապագան,
նայի՞ր նրա երիտասարդությանը**



Գարեգին Նժդեհ



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2 008թ. սեպտեմբերին Զգոր հասարակություն հիմնադրամը (ՀՀՀ) նախաձեռնեց Սևան համայնքի երիտասարդական քաղաքականության ծրագրի ստեղծումը: Այն կրում էր «Սևան համայնքի զարգացման ծրագրերում երիտասարդների մասնակցության խթանում» անվանումը:

Ծրագիրը միտում էր ապահովելու երկարաժամկետ և կայուն արդյունքներ: Սևան համայնքին անհրաժեշտ էր երիտասարդության քաղաքականություն. փաստաթուղթ, որը կապահովեր երիտասարդների խնդիրների լուծման համակարգված մոտեցում, այսինքն՝ տվյալ ոլորտում կատարվող ցանկացած ներդրում կամ կազմակերպվող միջոցառում պետք է բխեր այդ փաստաթղթի դրույթներից և հիմնված լիներ փաստաթղթում նշված առաջնահերթությունների վրա: Սակայն կարևոր էր նաև, որ այդ քաղաքականությունը ոչ թե մշակվեր որևէ կազմակերպության կամ անհատի կողմից, այլ հենց համայնքի երիտասարդության կողմից:

Հիմնադրամը առաջին քայլով համայնքին ներկայացրեց ծրագիրը և հայտարարեց ակտիվ երիտասարդներին գաղափարի շուրջ համախմբելու անհրաժեշտության մասին: Կոչին արձագանքած շուրջ 20 երիտասարդներից առավել սկզբունքային, ակտիվ և փորձառու 11 երիտասարդներից կազմվեց Երիտասարդական քաղաքականության ստեղծման նախաձեռնող խումբը, ովքեր վերապատրաստման և իրազեկման դասընթացներ անցնելուց հետո հետամուտ եղան երիտասարդական քաղաքականության և կից գործողությունների ծրագրի մշակմանը:

Փաստաթղթի մշակման մասնակցայնության ապահովման մյուս կարևոր քայլը կազմակերպված ֆորումն էր՝ քաղաքապետարանի, ավագանու, համայնքի հասարակական կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների, կրթական հաստատությունների և ՋԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ֆորումի ընթացքում երիտասարդական քաղաքականության և կից գործողությունների ծրագրի նախագիծը ներկայացվեց լայն հանրության դատին:

Հաջորդ քայլերը փաստաթղթի կենսունակությունն ապահովող քայլերն էին: Համայնքի ավագանու որոշմամբ Երիտասարդական քաղաքականությունը և կից գործողությունների ծրագիրը հաստատվեց որպես Սևան համայնքի 2009-2012թթ. զարգացման ծրագրի բաղկացուցիչ: Սա կարևորվում է նրանով, որ ըստ էության, փաստաթուղթն ստացավ «օրենքի ուժ», ինչը նշանակում է, որ սկսած 2010 թվականից Սևան համայնքի բյուջեից երիտասարդության համար նախատեսված ծախսերը կլինեն հենց իրենց՝ երիտասարդների կողմից մշակված առաջնահերթությունների ու գործողությունների ծրագրի համապատասխան

Երիտասարդներին վերաբերող ցանկացած միջոցառում կամ ծրագիր իրականացնող կազմակերպություն կամ անհատ կարող է օգտվել արդեն մասնակցային սկզբունքով մշակված և ավագանու կողմից հաստատված փաստաթղթից:

Վերոնշյալներն, իհարկե, գործունության ապահովման նախապայմաններ են, սակայն շատ կարևոր նախապայման է Երիտասարդական քաղաքականության և կից գործողությունների ծրագրի իրականացման և վերահսկողության արդյունավետ մեխանիզմների առկայությունը, որը մանրամասնորեն նկարագրված է փաստաթղթում: Երիտասարդական քաղաքականության և գործողությունների ծրագրի իրականացման համակարգումը և վերահսկողությունը կկատարվի անկախ մարմնի՝ Երիտասարդական քաղաքականության իրականացման հանձնաժողովի կողմից, որտեղ կընդգրկվեն շահագրգիռ բոլոր կողմերի ներկայացուցիչներ՝ ռոտացիոն սկզբունքով (մարմնի ստեղծման կարգը տրված է փաստաթղթում):

Չգոր հասարակություն հիմնադրամի անունից շնորհակալություն են հայտնում ծրագրի իրականացմանը օժանդակություն ցուցաբերած բոլոր կառույցներին՝ դոնոր կազմակերպություններին, Սևանի քաղաքապետարանի, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին, Երիտասարդական նախաձեռնող խմբին և համայնքի բնակիչներին, ովքեր իրենց անմիջական մասնակցությամբ նպաստեցին այս փաստաթղթի ստեղծմանը:

ԱՇՈՏ ՀԱԿՈՒՅԱՆ

Չգոր հասարակություն հիմնադրամի գործադիր տնօրեն

ԵՕԻ ՉՍ ԹՉՅՍՍԾՔ ԾԾՔԻ ՉԵՉԾ, ՉԻ ՉՍ ԾՉՕՉՅՉԻ ՉՍàóÃՍàóՍ

Սևան համայնքի Երիտասարդական քաղաքականությունը մշակված է ստորև թվարկված տասներեք չափորոշիչների հիման վրա, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ մշակված են ներկա դրությամբ համայնքում առկա իրավիճակը և անհրաժեշտ փոփոխությունները:

1. Երիտասարդության համար և նրանց կողմից ունեցած պատկերացումները հասարակության ապագայի մասին,
2. Տվյալների հենք երիտասարդության վերաբերյալ, երիտասարդական տեղեկատվություն և հաղորդակցություն,
3. Երիտասարդական ուսումնասիրություններ, լսումներ և թեմատիկ հարցումներ երիտասարդության խնդիրների վերաբերյալ,
4. Երիտասարդության մասնակցությունը ժողովրդավարական բարեփոխումներին և կառավարմանը,
5. Երիտասարդությունը՝ որպես հասարակությունում նորարարության և փոփոխության հիմնական գործոն,
6. Երիտասարդների ուսուցանում և երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստում,
7. Երիտասարդական քաղաքականության ոլորտում գնահատման պարզևատրման համակարգ,
8. Երիտասարդական քաղաքականության և ծրագրերի համակարգում,
9. Երիտասարդական օրենսդրություն,
10. Երիտասարդական քաղաքականության բյուջե,
11. Երիտասարդական քաղաքականության գործողությունների ծրագիր,
12. Երիտասարդական քաղաքականության գնահատում և վերաուղղորդում,
13. Երիտասարդական քաղաքականության վերաբերյալ փորձի փոխանակում,

1. Երիտասարդության համար և նրանց կողմից ունեցած պատկերացումները հասարակության ապագայի մասին

Գոյություն ունի / առկա է

- 2008թ. սեպտեմբերից Հզոր հասարակություն հիմնադրամի կողմից ստեղծվել է երիտասարդների նախաձեռնող խումբ, որը ստանձնել է Սևան համայնքի Երիտասարդության քաղաքականության մշակման գործը: Խմբում ընդգրկված են ուսանողներ, երիտասարդական ակումբի ներկայացուցիչներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ և այլ ակտիվ երիտասարդներ:
- Մասնակցային սկզբունքով մշակվել է Երիտասարդության քաղաքա-

կանությունը, որը կբերի երիտասարդների խնդիրների համակարգված լուծմանը և կնպաստի հասարակական տարբեր ոլորտներում երիտասարդության տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, նրանց ակտիվությանը, երիտասարդության զբաղվածությանը, արտագաղթի նվազմանը: Քաղաքականությանը կից գործողությունների պլանը ներառում է համայնքի բազմաթիվ բնագավառներ:

- Երիտասարդական ակումբ, որն ստեղծվել է 2008 թ.-ի սեպտեմբերին և զբաղվում է երիտասարդական միջոցառումների կազմակերպմամբ:

- Գործում է Հայ առաքելական եկեղեցու երիտասարդաց միությունը, որը ստեղծվել է 2001 թ.-ին, կրոնական կազմակերպություններին կից ևս գործում են երիտասարդական խմբեր:

- Գործում է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի երիտասարդ կին առաջնորդների դպրոցը:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Երիտասարդական քաղաքականությունը պետք է իրականացվի հետևողականորեն, համայնքի երիտասարդները ևս պետք է լինեն հետևողական, տեղյակ լինեն և մասնակցեն երիտասարդության ոլորտում որոշումների կայացմանը:

- Անհրաժեշտ է արդյունավետ կերպով օգտագործել լրատվամիջոցների դերը և նրանց միջոցով ապահովել հասարակության, այդ թվում՝ երիտասարդների իրազեկվածությունը իրենց իսկ խնդիրների, նոր մարտահրավերների վերաբերյալ:

2. Տվյալների հենք երիտասարդության վերաբերյալ, երիտասարդական տեղեկատվություն և հաղորդակցություն

Գոյություն ունի / առկա է

- ՁԼՄ-ները (STV1 հեռուստաալիք, «Սևան» թերթ, «ԱՓ» ամսագիր, «Ռադիոհայ-Սևան» ռադիոալիք) լուսաբանում են երիտասարդության խնդիրները և դրանց վերաբերյալ կատարվող միջոցառումները:

- «Երիտասարդության ազգային զեկույց», որը Սևանի երիտասարդությանն առնչվում է ոչ ուղղակիորեն, սակայն որոշակի պատկերացում է տալիս Գեղարքունիքի մարզի երիտասարդության մասին (www.youthpoli-cy.am):

- Վիճակագրության ազգային կոմիտեն տրամադրում է տեղեկություններ երիտասարդների մասին:

- Խաղաղության կորպուսի և ՏԶՀԿ-ի կողմից անցկացված հետազոտություն երտասարդների շրջանում:

- Մարդու իրավունքների գրադարան (ՄԻԳ), հանրային գրադարան և այլ ռեսուրս կենտրոններ:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Անհրաժեշտ է տպագրել և երիտասարդների շրջանում տարածել տեղեկատու թերթիկներ, որտեղ կլինեն երիտասարդությանը վերաբերող կայքէջերի հասցեներ և այլ օգտակար տեղեկություններ:

- Անհրաժեշտ է ստեղծել «Երիտասարդական ժամ» հաղորդաշար տեղական STV1 հեռուստաալիքով, որը կպատրաստվի երիտասարդության կողմից: Հաղորդաշարի միջոցով անդրադարձ կարվի երիտասարդության շրջանում տեղի ունեցող իրադարձություններին, կկազմակերպվեն քննարկումներ երիտասարդությանը հուզող տարբեր խնդիրների շուրջ, կիրավիրվեն համայնքում ակտիվությամբ աչքի ընկնող երիտասարդներ, նրանց մասին կպատրաստվեն տեսանյութեր, կիրավիրվեն ավագանու անդամներ, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ համայնքներից հյուրեր՝ համագործակցության նպատակով, մեծ ուշադրություն կդարձվի նաև սահմանափակ հնարավորություններով անձանց:

- Անհրաժեշտ է ստեղծել երիտասարդական պարբերաթերթ, որը կանդրադառնա երիտասարդության շրջանում տեղի ունեցող իրադարձություններին: Թերթի միջոցով կբարձրացվեն երիտասարդությանը հուզող խնդիրներ և դրանց կտրվեն լուծման ուղիներ, կտպագրվեն համայնքում ակտիվությամբ աչքի ընկնող երիտասարդների մասին նյութեր, հարցազրույցներ ավագանու անդամների, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Այս գործողությունները իրականացվելու է երիտասարդների կողմից:

- Անհրաժեշտ է, որ համայնքում գործող երիտասարդական կառույցները սերտացնեն համագործակցությունը Գավառի երիտասարդական կենտրոնի և այլ երիտասարդական կենտրոնների հետ՝ տեղեկատվության ակտիվ փոխանակման նպատակով:

- Երիտասարդությունը կարիք ունի Սևան համայնքի երիտասարդությանն առնչվող ինտերնետային կայքէջի ստեղծման:

3. Երիտասարդական ուսումնասիրություններ, լսումներ և թեմատիկ հարցումներ երիտասարդության խնդիրների վերաբերյալ

Գոյություն ունի / առկա է

- Ամիսը մեկ անգամ հանդիպումներ են կազմակերպվում քաղաքապետի հետ, որին կարող են մասնակցել և՛ երիտասարդները, և՛ երիտասարդության հարցերով զբաղվող կազմակերպություններն ու լրատվամիջոցները: Հանդիպումներն անցկացվում են լսումների և քննարկումների տեսքով:

- Համայնքում գործող հասարակական որոշ միավորումներ իրենց գործունեությանը մասնակից են դարձնում երիտասարդների, ովքեր օգտվում են կազմակերպությունների հնարավորություններից՝ իրենց հետաքրքրող տեղեկույթ ստանալու նպատակով:

- ՀՀ Կառավարության կողմից 2006-2007 թթ.-ին բոլոր մարզերում երիտասարդության շրջանում իրականացվել է լայնածավալ ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է «Երիտասարդության ազգային զեկույց», որը կարելի է օգտագործել որպես երիտասարդությանն առնչվող կարևոր տեղեկատվական բազա:

- 2009 թ.-ին Հզոր հասարակություն հիմնադրամը Սևան համայնքում իրականացրել է երիտասարդության ոլորտի ուսումնասիրություն, որի արդյունքների մասին զեկույցը զետեղված է Հիմնադրամի կայքէջում՝ www.ssf.am:

- Համայնքում գործող կազմակերպությունների կողմից (Խաղաղության կորպուս, ՏՀՀԿ և այլն) անցկացվել են հետազոտություններ, որոնցից կարելի է առանձնացնել երիտասարդության խնդիրներին վերաբերող տեղեկատվությունները:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Անհրաժեշտ է սերտացնել ավագանի-երիտասարդություն կապը և հաճախակի կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, լսումներ:

- Անհրաժեշտ է մշակել կրթական հաստատությունների երիտասարդների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ (մամակների, առաջարկների ստանացում և այլն):

- Անհրաժեշտ է կրթական հաստատություններում (ուսումնարան, քոլեջ) ստեղծել հատուկ կառույցներ (եթե այդպիսիք կան՝ ուժեղացնել նրանց դերը), որոնք կզբաղվեն այդ հաստատության երիտասարդության խնդիրներով: Պարբերաբար կազմակերպել տարբեր հաստատությունների համապատասխան կառույցների համատեղ քննարկումներ:

- Երիտասարդության խնդիրների և մարտահրավերների վերհանման նպատակով սոցիոլոգիական հետազոտություններ (զանգվածային հարցումներ, փորձագիտական հարցումներ, խորին հարցումներ, ֆոկուս խմբեր, դիտարկումներ և այլն): Սա կկրի պարբերական բնույթ, որի արդյունքում կստացվի թարմ տեղեկատվություն, կիրապարակվի և կտարածվի:

- Կանցկացվեն սեմինարներ, որի արդյունքում հնարավոր կլինի տեղեկատվություն տարածել, հավաքել, մարդկանց համախմբել: Տեղեկատվության պակասի լրացում ՋԼՄ-ների միջոցով, հայտարարությունների միջոցով (ուս խորհուրդներ):

Էլեկտրոնային հաղորդակցման միջոցով տեղեկատվության ձեռքբերում և տարածում:

- Կրթական և այլ հաստատությունների, ինչպես նաև ՋԼՄ-ների հետ գործընկերական հարաբերությունների հաստատում:

4. Երիտասարդության մասնակցությունը ժողովրդավարական բարեփոխումներին և կառավարմանը

Գոյություն ունի / առկա է

- ՀՀ Տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենքի համաձայն՝ ավագանու նիստերը դռնբաց են, և յուրաքանչյուր ոք իրավունք ունի դրանց մասնակցելու:

- Ուսանողական խորհուրդների առկայություն, որը պետք է մասնակիցը լինի տվյալ հաստատության որոշումների կայացմանը: Բանավեճի ակունքների առկայություն ավագ դպրոցներում:

- Համայնքում գործում է Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի Մարդու իրավունքների գրադարանը, որտեղ կա ժողովրդավարության, Մարդու իրավունքների մասին գրականության մեծ բազա, ինչպես նաև ՀՀ ողջ օրենսդրությունը:

- Համայնքում գործում է նաև Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գրադարանը, որտեղ կարելի է գտնել ժողովրդավարության և ՀՀ օրենսդրությանը վերաբերող գրականություն:

- Համայնքում գործում են մի շարք հասարակական կառույցներ, այդ թվում՝ Երիտասարդական ակունքը, որոնք կարողանում են համախմբել երիտասարդներին որոշակի հարցերի շուրջ:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Անհրաժեշտ է որոշումների կայացմանը մասնակցել և ազդեցություն գործել՝ արդյունավետորեն օգտագործելով ՁԼՄ-ները:

- Անհրաժեշտ է բարձրացնել ուսանողական խորհուրդների դերը՝ որպես տվյալ հաստատության ղեկավարմանը մասնակից կառույց:

- Անհրաժեշտ է խրախուսել հեռուստահաղորդումներ, թերթեր, ռադիո հաղորդումներ՝ կապված երիտասարդության ազատ խոսքի արտահայտման հետ:

5. Երիտասարդությունը՝ որպես հասարակությունում նորարարության և փոփոխության հիմնական գործոն

Գոյություն ունի / առկա է

- Սևանի Երիտասարդական ակունքի կողմից կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնք առաջինն են եղել համայնքում: Ակունքը 2008թ.-ին Սևանի քաղաքապետարանի կողմից արժանացել է «տարվա հայտնություն» մրցանակին:

- Հայ առաքելական եկեղեցու Երիտասարդաց միության կողմից 2009թ.-ին համայնքում առաջին անգամ կազմակերպվել է «Տյառն ընդառաջ» տոնին նվիրված միջոցառում:

- 2009թ.-ը Եվրոպական հանձնախմբի կողմից հայտարարված է նորարարության և ստեղծարարության եվրոպական տարի:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Նորարարության և ստեղծարարության եվրոպական տարվա շրջանակներում անհրաժեշտ է ցուցաբերել և մշակել երիտասարդական նորարարությունը խթանող մոտեցումներ (տարբեր բնագավառներում մրցույթների և մրցանակաբաշխության հայտարարում):

6. Երիտասարդների ուսուցանում և երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստում

Գոյություն ունի / առկա է

- «Երիտասարդական ակումբի», «ՌԵՈՐ» սոց. աջակցման կենտրոնի, «Հայկական Կարմիր խաչի մարզային մասնաճյուղի», «Կապուտաչյա Սևան» ՀԿ-ի, «Կոստանտա» ՀԿ-ի կողմից իրականացվում են անգլերենի և համակարգչային դասընթացներ, ինչպես նաև անգլերենի նոր մեթոդների դասավանդման դասընթացներ:

- Քաղաքապետարանում գործում է ֆրանսերեն լեզվի ուսուցման խմբակ:

- Զբաղվածության Սևանի տարածքային կենտրոնի կողմից կազմակերպվում են մասնագիտական ուսուցման դասընթաց:

- «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից անվճար կազմակերպվում են վարսավիրական դասընթացներ:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Անհրաժեշտ է կազմակերպել երիտասարդական աշխատանքի կազմակերպմանը, երիտասարդ առաջնորդների ձևավորմանը և երիտասարդների քրիստոնեական դաստիարակությանն ուղղված դասընթացներ:

7. Երիտասարդական քաղաքականության ոլորտում գնահատման/պարզևատրման համակարգ

Գոյություն ունի / առկա է

- Սևանի քաղաքապետարանի Սպորտի, մշակույթի և երիտասարդության բաժնի կողմից իրականացվում է ամենամյա մրցանակաբաշխություն («տարվա երիտասարդ», «լավագույն մարզիկ», «տարվա հայտնություն»):

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Անհրաժեշտ է ապահովել Սևան քաղաքի բոլոր ուսումնական հաստատությունների ներգրավվածությունը կազմակերպվող ամենամյա համաքաղաքային ստեղծագործական միջոցառումների մրցանակաբաշխությանը և մրցույթներին:

- Անհրաժեշտ է ակտիվացնել հոգևոր և մշակութային կյանքը՝ կազմակերպելով մանկապատանեկան և երիտասարդական մրցանակաբաշ-

խություն (քրիստոնեություն, կերպարվեստ, երաժշտություն, պարարվեստ, մինի թատրոններ, անհատ ստեղծագործողներ և այլն):

- Կազմակերպել «Ուրախների և հնարամիտների ակումբներ» (ՈւՅԱ), ՈւՅԱ մրցույթներ:

- Մրցանակաբաշխություններին մասնակից դարձնել տարբեր ոլորտների (քիզնես, մշակույթ, ՁԼՍ և այլն) ներկայացուցիչների:

- Տարբեր ոլորտներում մրցանակաբաշխություններ, որտեղ որպես մրցանակ կծառայեն լավագույն լրատվամիջոց, հասարակության սեկտորի հետ լավագույն աշխատող, լավագույն դպրոց, լավագույն կազմակերպություն կոչումները:

8. Երիտասարդական քաղաքականության և ծրագրերի համակարգում

Գոյություն ունի / առկա է

- ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգը, Պետական երիտասարդական քաղաքականության ռազամավարական ծրագիրը և Պետական երիտասարդական քաղաքականության գործողությունների ծրագիրը 2008-2012 թթ.բբբբ համար:

- Սևանի քաղաքապետարանի Սպորտի, մշակույթի և երիտասարդության բաժին:

- Մինչ սույն փաստաթղթի մշակումը Սևան համայնքը չի ունեցել երիտասարդական քաղաքականություն: Փաստաթղթով այլևս սահմանված է համայնքի երիտասարդական քաղաքականությունը:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Անհրաժեշտ է ստեղծել անկախ մարմին, որը կհամակարգի և կվերահսկի Սևանի երիտասարդական քաղաքականության և կից գործողությունների պլանի իրականացումը: Մարմնի ստեղծման և գործունեության մասին մանրամասները ներկայացվում են ստորև:

- Սևան համայնքի երիտասարդական քաղաքականության և կից գործողությունների պլանի իրականացման համակարգումը և վերահսկումը պետք է իրականացվի Երիտասարդական քաղաքականության իրականացման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից, որը ստեղծվում է հետևյալ կազմով.

- Ավագանու երկու ներկայացուցիչ,

- Համայնքապետարանի երիտասարդության աշխատանքների պատասխանատու,

- Երիտասարդական քաղաքականության մշակման (ԵՔՄ) նախաձեռնող խմբի երկու ներկայացուցիչ,

- Սևանի երտասարդական ակումբի մեկ ներկայացուցիչ,

- ՀԿ մեկ ներկայացուցիչ,

Հանձնաժողովը պետք է ներկայացնի առաջարկներ, որոնք հինք կհանդիսանան Սևան համայնքի ավագանու համար՝ համայնքի բյուջեի երիտասարդական տողից կամ գործողությունների պլանից որևէ գործողություն համապատասխան սուբյեկտի իրականացմանը վստահելու համար:

- Քաղաքականության շրջանակներում իրականացվող ծրագրերի դիտորդունը (մոնիթորինգ) ևս պետք է իրականացնի Հանձնաժողովը:

- Հանձնաժողովի կազմը պետք է ձևավորվի ստորև ներկայացված կազմով և կարգով, որը պետք է հաստատի քաղաքապետը:

- ավագանու երկու ներկայացուցիչներին լիազորում է ավագանին,

- համայնքապետարանի երիտասարդության աշխատանքների պատասխանատուի տեղը հանձնաժողովում զբաղեցնում է տվյալ պաշտոնում աշխատող անձը,

- ԵՔՄ նախաձեռնող խմբի երկու ներկայացուցիչի լիազորում է նախաձեռնող խումբը,

- Հայ առաքելական եկեղեցու մեկ ներկայացուցիչի լիազորում է Գեղարքունիքի թեմի առաջնորդը,

- ՀԿ երեք ներկայացուցիչի ընտրում և լիազորում են համայնքի ՀԿ-ները (ներկայացուցիչ ՀԿ-ները պետք է երիտասարդության ոլորտում ծավալած որևէ գործունեության փորձ ունենան): ՀԿ-ների ընտրության համար համայնքի բոլոր ՀԿ-ներին հրավիրում է հանձնաժողովը:

- Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են քվեարկությամբ, որը տեղի է ունենում պարզեցված կարգով՝ բաշխված ձայների պարզ մեծամասնության սկզբունքով:

9. Երիտասարդական օրենսդրություն

Գոյություն ունի / առկա է

- ՀՀ Երիտասարդության մասին օրենքի նախագիծը ներկայումս գտնվում է մշակման փուլում:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Անհրաժեշտ է ապահովել Սևան համայնքի երիտասարդության մասնակցությունը այդ օրենքի մշակման գործընթացին (մասնակցություն քննարկումներին, առաջարկների մշակում):

10. Երիտասարդական քաղաքականության բյուջե

Գոյություն ունի / առկա է

- Սևան համայնքի բյուջեում նախատեսված է գումարներ երիտասարդական միջոցառումների համար:

- ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամը ֆինանսավորում են երիտասարդական ծրագրեր:

- Եվրոպայի խորհուրդը և «Երիտասարդական հիմնադրամը» միջոցներ են տրամադրում երիտասարդական ծրագրերի համար:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Անհրաժեշտ է Սևան համայնքի բյուջեում նախատեսել երիտասարդական քաղաքականության վերաբերյալ առանձին տող կից գործողությունների պլանին համապատասխան:

- Համայնքի Երիտասարդական քաղաքականության իրականացման համար համայնքային բյուջեով նախատեսված գումարներից բացի անհրաժեշտ է գտնել այլ ֆինանսական աղբյուրներ՝ գործողությունների պլանը ինտենսիվ կերպով իրականացնելու համար:

11. Երիտասարդական քաղաքականության գործողությունների պլան

Գոյություն ունի / առկա է

- Սույն քաղաքականությանը կից ԵՔՄ նախաձեռնող խմբի կողմից մշակվել է գործողությունների պլան 2009-2012 թթ. համար:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

- Հանձնաժողովը պետք է ապահովի գործողությունների պլանի յուրաքանչյուր քայլի իրականացումը մրցույթներ հայտարարելու միջոցով գործողությունների իրականացումը համայնքի բյուջեի միջոցներով տրամադրելու որևէ սուբյեկտի, ինչպես նաև համայնքի ղեկավարությանը, հիմնարկ-ձեռնարկություններին, կազմակերպություններին տեղեկացնի տվյալ տարվա համար նախատեսված, սակայն համայնքի բյուջեով չնախատեսված գործողությունների մասին:

- Հանձնաժողովը, ԵՔՄ նախաձեռնող խմբի հետ համագործակցելով, պետք է մշակի Սևան համայնքի յուրաքանչյուր ռազմավարական ծրագրին կից երիտասարդական գործողությունների նոր պլան և ներկայացնի ավագանու հաստատմանը:

12. Երիտասարդական քաղաքականության գնահատում և վերաուղղորդում

Գոյություն ունի / առկա է

- Մշակված Երիտասարդական քաղաքականությունը Սևան համայնքի համար առաջինն է, ուստի դեռևս քաղաքականության գնահատման և վերաուղղորդման առումով որևէ քայլ չի կատարվել:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

• Անհրաժեշտ է յուրաքանչյուր չորս տարին մեկ մասնակցային սկզբունքով իրականացնել Երիտասարդական քաղաքականության վերանայումը, գործողությունների պլանի գնահատումը: Վերոնշյալ գործողությունները պետք է իրականացվեն հանձնաժողովի կողմից՝ մասնակցային սկզբունքով: Նախկին գործողությունների ծրագրի գնահատումից հետո հանձնաժողովը պետք է իրականացնի հաջորդ չորս տարվա գործողությունների ծրագրի մշակում, որը կներկայացվի ավագանու հաստատմանը:

13. Երիտասարդական քաղաքականության վերաբերյալ փորձի փոխանակում

Գոյություն ունի / առկա է

• Սևան համայնքի սույն երիտասարդական քաղաքականությունը Հայաստանում առաջինն է իր մշակման ֆորմատով, որն անհրաժեշտ է զարգացնել և կիրառել մյուս համայնքներում: Փորձի փոխանակումը կարելի է կատարել սեմինարների, փոխադարձ այցերի, ինտերնետի, ՁԼՄ-ների, տպագիր նյութերի միջոցով:

• Երիտասարդության բնագավառում փորձի փոխանակման համար մի շարք միջազգային կազմակերպություններ միջոցներ են տրամադրում:

Ի՞նչ է անհրաժեշտ / առաջարկներ

• Անհրաժեշտ է համայնքի երիտասարդությանը մասնակից դարձնել սովյալ ոլորտում ազգային և միջազգային փորձի փոխանակմանը:



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփաթ ինթերնեշնլի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում, Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են Հզոր հասարակություն հիմնադրամին և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփաթ ինթերնեշնլի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Միացյալ Նահանգների կառավարության կամ ՔԶՀՀ-ի տեսակետների հետ: